

ւորներն ալ արտաքսուած էին, և Հապէշիստան իսպառ փակուած էր լատին կրօնաւորներու առջև. բաց կը մնար միայն հայ եկեղեցականներու համար:

Յովհաննէս Թիւթիւնճի, որ հաւանօրէն բաժին մը ունեցած պիտի ըլլար Լուի Ժ'ի. ի տեսն մըշակուած խաչակրութեան ծրագիրի մը մէջ կամ ատանկ երաղի մը հաւատացող մարդոց հետ սերտ յարաբերութիւն ունեցած, կը խորհիմ թէ մասնաւոր առաքելութեամբ մը զրկուած պէտք է ըլլայ հապէշ արքունիքին մօտ, Հապէշիստանն ալ մասնակից ընելու համար այն ընդհանուր յարձակողականին, որ ամէն կողմէ պիտի գործադրուէր Արեւելքի քրիստոնէից պատուհասը նկատուած Թուրքերու դէմ:

Ինչպէս տեսնուեցաւ, Ժէ. դարու վախճանին, Թուրքերը առաջացած էին մինչև Կեդրոնական Եւրոպա և հասած՝ Վիեննայի դռները, ստրասփի մատնելով ամբողջ քրիստոնեայ աշխարհը:

Այս առթիւ Եւրոպայի քրիստոնեայ պետութիւնները գաղտնաբար կը բանակցէին իրարու հետ, Թուրքիոյ դէմ ընդհանուր ճակատ մը կազմելու համար:

Ռուս պետական դիւաններուն մէջ գտնուած փաստաթուղթ մը կը հաստատէ, թէ այս մեծ համադաշնակցութեան մէջ կ'որոշուի առնել նաև քրիստոնեայ Եթովպիան՝ Եգիպտոսի հարաւէն Թուրքիան հարձակուելու համար: Այս գործին յարմարագոյն միջնորդ կը նկատուի Ռուսիան, հաւանօրէն անոր համար որ կաթոլիկ երկիրներու դէմ Հապէշները դառնացած էին և անոնց առջև գոցած իրենց երկիրը: Ռուսիա, իբր օրթոտքս, կրնար աւելի հաւանականութիւն ունենալ յաջողելու:

Ռուսիա, արդարև, ձեռնարկ մը կ'ընէ: Իր նմ-